

Բելլա ՍԱՐՈՒՆՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՀԱՄԱՌՈՏ ԱՆԴՐԱԴԱՐՉ 20-ՐԴ ԴԱՐԻ
ՀԱՅԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ**

Տվյալ հոդվածում ներկայացվում են անցած դարում սփյուռքում լույս տեսած և սփյուռքահայության մեջ հայերենի պահպանմանն ուղղված լավագույն բառարանները: Ուշադրության է արժանանում այն հանգամանքը, որ ժամանակի գործոնը մեծ դեր է խաղում բառարանագրության մեջ, քանզի նոր տեխնոլոգիաների և գիտությունների զարգացումն ու ստեղծումն ի հայտ են բերում նոր եզրույթներ՝ անհրաժեշտություն առաջացնելով ընթերցողին ևս իրագեկել նորարարությունների հայերեն համարժեքներին:

Բանալի բառեր. *բառարանագրություն, բառահոդված, սփյուռքահայություն, թարգմանություն, հայատառ, երկլեզու բառարաններ, փոխառություն, տպագրական տեխնիկա, հայագիտություն, հայապահպանություն*

Հայերենին վերաբերող առաջին երկլեզվյան բառարանները ստեղծվել են Եվրոպայում, եվրոպացիների կողմից: Մեզ ծանոթ առաջին ձեռագիր բառարանը առնչված է լատիներենին և պատկանում է 9-րդ դարին: Լատիներենին է վերաբերում նաև առաջին հրատարակված բառարանը: Խոսքը վերաբերում է Միլանի սբ. Թովմաս եկեղեցու կաթողիկոս, հայագետ Փրանչիսկո Ռիվոլայի «Հայերեն-լատիներեն բառարան» աշխատությանը /Rivola, 1621/:

Հայ բառարանագրության մեջ հատուկ տեղ է գրավում հայ-ռուսական բաժինը: Այն սկիզբ է առել 18-րդ դարում և հարուստ է թե՛ ընդհանուր թարգմանական, բացատրական բառարաններով, թե՛ մասնագիտական բնույթի բառարաններով:

19-րդ դարում աճում է հետաքրքրությունը եվրոպական ժամանակակից լեզուների նկատմամբ՝ իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն: Այս տարիներին բառարանագրության գործի մեջ իրենց ավանդն են դրել Մխիթարյան միաբանության խոշոր ներկայացուցիչները՝ Մանվել Ջախջախյան, Հարություն Ավգերյան և ուրիշներ: Նրանցից Հարություն Ավգերյանը համարվում է հայերեն-անգլերեն բառարանագրության հիմնադիրը:

Նրան է պատկանում “Dictionary English and Armenian” բառարանը, որն ավելի քան կես դար համարվել է անգլերենին վերաբերող լավագույն բառարանը և օգտագործվել է որպես հավաստի աղբյուր այլ բառարաններ կազմելու համար /Azveryan, 1821/:

20-րդ դարի սկզբներին հայկական մշակույթի կենտրոններ դարձան Կոստանդնուպոլիսը և Անդրկովկասը: Սա վերաբերում է նաև բառարանագրությանը: Իրար հետևից լույս էին տեսնում լավագույն երկլեզվյան բառարանները: Այս առումով պետք է ասել, որ հատկապես հարստանում է հայերեն-անգլերեն բառարանագրության բաժինը: 1900-1915թթ. Պոլսում իրար ետևից լույս են տեսնում անգլերենին առնչվող մի շարք հետաքրքիր բառարաններ: Դրանք են՝ «Առձեռն բառարան հայերեն-անգլերեն» (1902թ.), «Բառարան

անգլերեն-հայերեն և հայատառ թուրքերեն» (1908թ.), «Գրպանի բառարան անգլերեն-հայերեն» (1903թ.), «Գրպանի բառարան անգլերեն-հայերեն» (1905թ.), «Նոր բառարան անգլերեն-հայերեն» (1907թ.), «Գործնական բառարան հայերեն-անգլերեն» (1905թ.) և «Պատկերագարո՞ գործնական բառարան անգլերեն-հայերեն» (1910թ.) /Գասպարյան, 1968/:

Այսպիսով, թարգմանական բառարանագրությունը և հատկապես երկլեզվյան բառարաններ կազմելու աշխատանքները այդ շրջանում հիմնականում իրականանում են Հայաստանի սահմաններից դուրս: Այս երևույթը ավելի է խորանում 1915 թվականի Մեծ Եղեռնի դեպքերից հետո: Եվրոպայի, Մերձավոր արևելքի և Ամերիկայի տարբեր անկյուններում, տարբեր տարիների լույս են տեսնում ամենատարբեր նպատակներ հետապնդող շուրջ տասնյակ բառարաններ: Դրանք բոլորն էլ հենվում էին հայ բազմադարյան բառարանագրության լավագույն ավանդույթների վրա՝ միաժամանակ իրենց հիմքում ունենալով եվրոպական բառարանագրության գոհարներ: Սակայն այս ամենի հետ մեկտեղ սփյուռքահայ բառարանագրությունը չունեցավ և չէր կարող ունենալ մի ընդհանուր կենտրոն, որը կառավարեր և ուղղություն տար բառարանագրական աշխատանքներին: Բառարանագրական միավորված կենտրոն չունենալու մասին է խոսում նաև այն փաստը, որ հաճախ տարբեր վայրերում միաժամանակ, բայց և իրարից անկախ, լույս են տեսնում միևնույն տիպի բառարանագրական աշխատություններ:

Առաջին համաշխարհային պատերազմի ետպատերազմյան տարիներին հրատարակված մոտ հիսուն բառարանագրական աշխատություններից երեսունը երկլեզվյան բառարաններ են, որոնք վերաբերում են անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, արաբերեն, պարսկերեն լեզուներին: Ընդհանուր, թարգմանական այս բառարանների ամենամեծ բաժինը վերաբերում է անգլերեն, ֆրանսերեն և արաբերեն լեզուներին:

Սակայն անգլերենին վերաբերող լավագույն բառարանները կապված են Հարություն Չազմազնյանի և Մեսրոպ Գոյունճյանի անունների հետ: Չնսեմացնելով մյուս բառարանների դերն ու նշանակությունը՝ կանգ առնենք այս հեղինակների երեք մեծածավալ աշխատությունների վրա:

Անգլերենին վերաբերող առաջին լավագույն բառարանը հրատարակվել է Բոստոնում 1922 թվականին: Դա Հարություն Չազմազնյանի “Comprehensive dictionary English-Armenian” աշխատությունն է, որն անմիջապես լայն ընդունելություն գտավ և, լինելով մինչ այդ հրատարակված ամենաընդարձակ և մանրամասն մշակված այդօրինակ աշխատությունը, վերահրատարակվել է 1950 և 1960 թվականներին: Այն պարունակում է շուրջ 100.000 բառահոդված, ունի բավականին ընդարձակ առաջաբան և մի շարք հավելվածներ:

Բառարանի առաջաբանը մեզ հարուստ նյութ է տալիս այն կազմելու աշխատանքների մանրամասների մասին, ծանոթացնում է բառարանի կառուցվածքին, հուշում է նրանից օգտվելու կանոնները: Առաջաբանում խոսվում է բառարան կազմելու դժվարությունների մասին ընդհանրապես, ինչպես նաև տվյալ բառարանը կազմելիս առաջ եկած մասնավոր դժվարությունների մասին:

Ճակատագրի բերումով հայերի Ամերիկայում հայտնվելը ստեղծել էր այնպիսի մի վիճակ, որ մի կողմից անգլերեն-հայերեն և հայերեն-անգլերեն բառարան ունենալը դարձել էր առաջին անհրաժեշտություն, մյուս կողմից՝ բացակայում էին դրա ստեղծման ամենատարրական պայմաններն անգամ: Բացի այդ, ժամանակի աճող պահանջները բավարարող բառարան կազմելը մեկ մարդու ուժերից վեր էր և լիակատար բառարան կարելի է կազմել միայն բազմաթիվ մասնագետների համատեղ գործունեությամբ և տպագրական տեխնիկայի կատարելությամբ: Սակայն, ինչպես իր բառարանի առաջաբանում խոստովանում է Հ.Չազմագնյանը, տասնամյակներ սպասելու փոխարեն պետք է այսօր անել այն, ինչ հնարավոր է:

Առաջաբանից իմանում ենք նաև, որ Հ.Չազմագնյանի բառարանի անգլերեն բառացանկի հիմքում ընկած է Մ.Վեբստերի հայտնի բառարանը, որն անշուշտ մեծ օժանդակություն էր նրա համար:

Բացատրական բաժնում մեծ տեղ է տրված նորակերտ բառերին և հիմնականում փորձ է արված միջազգային գործածություն ունեցող բառերը ներկայացնել հայերեն թարգմանությամբ: Սակայն կան բառեր, որոնք թարգմանված չեն, քանի որ հեղինակի կարծիքով ստացվում է անճաշակ և անհամապատասխան թարգմանություն: Նման դեպքերում հեղինակը նպատակահարմար է գտել որդեգրել եվրոպական բառը: Նա գտնում է, որ դա ոչ միայն չի վնասի, այլև կլրացնի մեր լեզվի բառապաշարը:

Բառարանի հիմնական բաժինն ընդգրկում է 1-1296 էջերը: Գրան հաջորդում են մի շարք հավելվածներ:

Հարություն Չազմագնյանի “Comprehensive dictionary English-Armenian” աշխատությունը այդօրինակ բառարաններից ամենաընդարձակն ու լավագույնն է նախորդների համեմատությամբ: Այն երկար ժամանակ համարվում էր միակ օգտագործելի բառարանը մինչև 1961 թվականը, երբ Կահիրեում լույս է տեսնում Մեսրոպ Գոյումճյանի «Ընդարձակ բառարան անգլերեն-հայերեն» աշխատությունը:

Մինչ նշված բառարանի մասին խոսելը՝ կանգ առնենք մի քանի այլ բառարանների վրա, որոնք նախորդել են վերոհիշյալ աշխատությանը:

1944թ. Լոս-Անջելեսում հրատարակվում է Ա.Հ. Յադուբյանի «Անգլերեն-հայերեն և հայերեն-անգլերեն» փոքրածավալ բառարանը, որտեղ հայերեն բառերը գրված են լատինատառ: Այն նախատեսված է ոչ միայն Ամերիկայում վաղուց բնակություն հաստատած և արդեն անգլիախոս հայերի համար, այլ հենց տեղացիների համար, որոնց շփումը տեղի հայկական համայնքի անդամների հետ անխուսափելի էր նրանց առօրյա կյանքում և որոնց խնդրանքով էլ կազմվել է վերոհիշյալ բառարանը:

Նախաբանում շեշտված է, որ բառարանի հայերենը համապատասխանում է արևմտահայերենի հնչյունական կանոններին: Առաջին բաժնում տրված է հայկական այբուբենը և ընթերցելու որոշ կանոններ: Բառարանը շատ սեղմ է. տրված են միայն ամենաշատ գործածվող բառերը: Այն զերծ է դարձվածքներից, բառակապակցություններից և պարզաբանող օրինակներից:

Նախաբանում տրված է հակիրճ տեղեկատվություն հայ ժողովրդի պատմության, նրա ստեղծած արվեստի ու ճարտարապետական հուշարձանների, գրականության և կենցաղի մասին:

Մյուս բառարանը, որի մասին հարկ ենք համարում խոսել սույն հոդվածում, Չ.Չորայանի «Անգլերեն–հայերեն համայնագիտական բառարան» աշխատությունն է /1949թ./: Բառարանի տիտղոսաթերթի վրա կարդում ենք աշխատության լրիվ վերնագիրն այնպես, ինչպես այն վերնագրել է հեղինակը՝ «Անգլիերեն լեզուի հնչյուններուն յատկաբանութիւնները, ոճերուն և հոմանիշներուն նրբութիւնները բացատրող անգլիերեն-հայերեն համայնագիտական բառարան»: Պետք է ասել, որ աշխատության բովանդակությունը գրեթե համընկնում է նրա երկարաշունչ վերնագրին: Սա իսկապես բավական մեծածավալ բառարան է՝ կազմված 100 էջանոց բրոշյուր-հատորներից: Հեղինակը գտնում է, որ այդպես և՛ օգտվողին է հարմար, և՛ հեշտացնում է հրատարակման աշխատանքների հետ կապված դժվարությունները /Գասպարյան, 1968/:

Բառարանում տրված է բառահոդվածի մանրամասն և բազմակողմանի մշակումը: Դա նկատվում է թե՛ բառի հնչյունական պատկերի վերարտադրության, թե՛ հոմանիշների և դարձվածքների ընտրության ժամանակ, թե՛ թարգմանական բաժնում և թե՛ բառի կամ դարձվածքի իմաստը պարզաբանող օրինակներում: Հատկանշական է, բառի հնչյունական պատկերի վերարտադրությունը վերոհիշյալ բառարանում: Բացի բրիտանական կամ, ինչպես հեղինակն է նշում իր աշխատության առաջաբանում, «անգլիական արտասանությունից» շատ բառերի համար տրված է նաև ամերիկյան արտասանությունը, եթե կա էական տարբերություն:

Առաջաբանում կարդում ենք հեղինակի վերաբերմունքը մինչ այդ հրատարակված անգլերեն-հայերեն բառարանների մասին, նրա շարադրանքը նրանցում եղած թերությունների վերաբերյալ, այն է՝ «ոճերի և յատկաբանությունների, ինչպես նաև բառի բացատրությունը պարզաբանող օրինակների սակավությունը»:

Առանձին պարբերությամբ ներկայացվում է հեղինակի տեսակետը այսպես կոչված լիակատար բառարանի վերաբերյալ:

1950թ. Կահիրեում հրատարակվում, իսկ 1970թ. Բեյրութում վերահրատարակվում է Մ.Գույումճյանի «Ընդարձակ բառարան. հայերեն-անգլերեն» աշխատությունը: Սա իսկապես ընդարձակ բառարան է /շուրջ 70.000 բառահոդված/, նույնաբնույթ բառարաններից ամենաընդարձակը հայ բառարանագրության մեջ: Մ.Գույումճյանն իր բառարանը կազմելիս օգտագործել է հայ և օտար լավագույն բառարանային աշխատությունները:

Առաջաբանում Մ.Գույումճյանը պարզաբանում է բառարանի նպատակը: Հեղինակը նշում է, որ «սույն աշխատանքի ստեղծման հիմնական դրդապատճառը հայերեն-անգլերեն արդի բառարանի պահանջն էր: Սա առաջին հայերեն-անգլերեն բառարանը չէ: Ուստի և այսօր նոր բառարանի արժանիքը նախորդի նկատմամբ այն պետք է լինի, որ կարողանա արձագանքել նոր ժամանակներին, կյանքի նոր երևույթներն արտահայտել նոր բառերով»:

Այնուհետև, շարադրված են բառարանը կազմելու և հրատարակելու աշխատանքների հետ կապված դժվարությունները:

Առաջաբանից և համառոտագրություններից հետո գալիս է աշխատության հիմնական բաժինը, որը զբաղեցնում է 1-894 էջերը: Բառարանն ունի պարզ կառուցվածք:

Բառարանին իբրև հավելված կցված են մի քանի մասնագիտական բառագրքույկներ: Կարելի է ասել, որ նրանցից ամեն մեկը մի ինքնուրույն հայերեն-անգլերեն մասնագիտական տերմինաբանական բառարան է: Հավելված ունի հետևյալ ենթաբաժինները. 1. Առևտրական բառարան՝ առևտրի մեջ ընդունված հասպավումներ, պետություններ և դրանց դրամներ, 2. Բժշկագիտական բառարան 3. Երաժշտական բառարան՝ նշանավոր երաժշտական ստեղծագործություններ, հեղինակներ, աշխարհահռչակ երգահաններ, երաժշտական գործիքներ, 4. Չինվորական բառարան, 5. Իմաստաբանական բառարան՝ փիլիսոփայական տերմինաբանություն և աշխարհահռչակ փիլիսոփաների անուններ և համառոտ տեղեկություններ նրանց մասին, 6. Իրավագիտական բառարան, 7. Ճարտարապետական բառարան, 8. Հատկաբանական բառարան՝ ժողովրդական, իդիոմատիկ արտահայտություններ ու ոճեր:

Բառարանային հավելվածին հաջորդում են մի շարք այլ կարգի հավելվածներ, ինչպես օրինակ՝ քերականական գիտելիքներ, հատուկ անուններ, թանկագին քարեր և այլն, որոնք մույնպես որոշակի արժեք են ներկայացնում:

Հայերեն-անգլերեն բառարանից հետո Մեսրոպ Գույումճյանը ճեռնամուխ է լինում իր հաջորդ աշխատությանը, որն իր ծավալով ոչ միայն չի զիջում, այլև գերազանցում է նախորդին: Խոսքը վերաբերում է «Ընդարձակ բառարան անգլերեն-հայերեն» աշխատությանը, որը լույս է տեսնել 1961թ. Կահիրեում: Բառարանն ունի շուրջ 100000 բառահոդված:

Այստեղ հեղինակը, հրաժարվելով վերոնշյալ բառարանի՝ ըստ ոլորտների մասնագիտական բառապաշարի առանձնացման ձևաչափից, ընտրել է այբբենական սկզբունքը: Բառարանն ունի պարզ կառուցվածք, որը շատ բանով նման է իր նախորդին՝ Հ.Չազմազնյանի «Անգլերեն-հայերեն բառարանին»: Սակայն դա բնավ էլ չի նսեմացնում Մ.Գույումճյանի վերոհիշյալ բառարանի արժեքը: Ընդհակառակը՝ լրացնում և հարստացնում է բառարանի արդիական բնույթը, գիտական տերմինների ճշգրիտ թարգմանությունը, ժամանակակից գիտությունների և տեխնիկայի նորագույն նվաճումների արտացոլումը, բառակապակցությունների և դարձվածքների առատությունը, դրանց հայերեն համարժեքների ընտրությունը և մի շարք այլ հատկանիշներ: Մ.Գույումճյանի այս բառարանը դառնում է անփոխարինելի աղբյուր ամենատարբեր բնույթի գրականությունից օգտվելու համար:

Բառարանները, որոնց մասին խոսվում է հոդվածում, ունեն մեկ ընդհանրություն. նրանք բոլորն էլ հրատարակվել են արտասահմանում և նախատեսված են սփյուռքահայության համար: Հայերենին առնչվող բառարանների ստեղծումն այն կարևոր գործոններից էր, որ ոգևորում էր դրսում ապրող յուրաքանչյուր հայի և համախմբում էր մեկ ընդհանուր գաղափարի շուրջ:

Անգնահատելի էր նաև այն աշխատանքը, որ տարվում էր հայոց լեզվի պահպանման և անգլերենի հետ զուգակցման համար: Վերոնշյալ գրքերը մինչ այժմ սփյուռքահայության համար լույս տեսած լավագույն բառարաններն են և լայն կիրառություն ունեն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Avzeryan H. Dictionary: English and Armenian. Venice, 1821.
2. Avzeryan H. Dictionary: Armenian and English. Venice, 1825.
3. Chazmaznyan H. Comprehensive dictionary: English-Armenian. Boston, 1922.
4. Chazmaznyan H. Comprehensive dictionary: English-Armenian. Boston, 1950.
5. Chazmaznyan H. Comprehensive dictionary: English-Armenian. Boston, 1960.
6. Goyoumjian M. Comprehensive dictionary: Armenian-English. Cairo, 1950.
7. Goyoumjian M. Comprehensive dictionary: English-Armenian. Cairo, 1961.
8. Goyoumjian M. Comprehensive dictionary: Armenian-English. Beirut, 1970.
9. Yaghubyan A.H. English-Armenian and Armenian-English dictionary. USA: Los-Angeles, 1944.
10. Rivola F. Armenian-Latin dictionary. Rome, 1621.
11. Գասպարյան Գ. Հայ բառարանագրության պատմություն, Երևան, ՀՍՍՀ ԳՍ հրատ., 1968:

Б. САРУХАНЫЯН – Краткий очерк армяно-английской лексикографии XX века. – В статье рассмотрен целый ряд изданных в прошлом веке за рубежом двуязычных армяно-английских и англо-армянских словарей, представляющих особый интерес с точки зрения сохранения армянского языка. Представлены основные принципы составления словарей, среди которых особую роль играет временной фактор, поскольку развитие новых наук и технологий требует образования новых терминов, используемых в современном армянском языке.

Ключевые слова: лексикография, словарная статья, словарная дефиниция, перевод, двуязычные словари, заимствования, печатная технология, сохранение армянского языка

B. SARUKHANYAN – A Concise Review of the 20th Century Armenian-English Lexicography. – The paper introduces the best and the largest dictionaries published in the diaspora in the 20th century which played a great role in preserving the Armenian language. Special attention is paid to the new terms and their Armenian equivalents which appeared as a result of the development of new technologies and sciences.

Key words: lexicology, word entry, dictionary definition, translation, Armenian alphabet, bilingual dictionaries, editorial technologies, preservation of Armenian nation and language